«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/50-1»

ք. Երևան «27» 09. 2021թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Հայկ Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Վահան Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված Ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք՝

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված Ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել Ապրանքի մատակարարումը Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել Պայմանագրով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և Պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 23583600 (քսաներեք միլիոն հինգ հարյուր ութսուներեք հազար վեց հարյուր դրամ)՝ ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հաստատման օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված Ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Գնորդը Պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված Ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է

նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե Պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված Ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված Ապրանքը համարվում է ընդունված և Պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ապրանքի մատակարարումը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից Պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ

Պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, և (կամ) Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրերում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել Ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1	Հասցե՝ ք. Երևան, Շիրազի 36, բն 14
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ,
Հ/Հ 1150001172630300	Հ/Հ 1570026273290100
ՀՎՀՀ 01522459	ՀՎՀՀ 01253291
Գլխավոր տնօրեն՝	Տնօրեն՝
---------- Հ. Հարությունյան	---------- Ա. Խաչատրյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«27» 09. 2021թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/50-1» ծածկագրով Պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Միավոր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	48211130/2	Սերվեր	HPE Hewlett Packard Enterprise	HPE ProLiant DL360 Gen10 8SFF NC Configure -to -order Server Մեկ հատ Rack -mountable 1U սերվեր՝ հետևյալ պարամետրերով: CPU - ն Intel Xeon -Gold 6242: քանակը – 1, 2 -րդ CPU - ն տեղադրելու հնարավորությամբ: Յուրաքանչյուր պրոցեսորի միջուկների քանակը – 16, հոսքերի քանակը 32, Լիթոգրաֆիան 14նմ, քեշ հիշողության ծավալը՝ 22ՄԲ: Յուրաքանչյուր պրոցեսորի բազային հաճախականությունը՝ 2.8GHz, առավելագույնը՝ 3.9GHz, հաշվարկային հզորությունը՝ 150Վտ : Սերվերային պահարանում ներկառուցման համար անհրաժեշտ բոլոր դետալները ներառված կլինեն : Օպերատիվ Հիշողությունը՝ RAM ՝ 6 հատ 32GB (1x32GB) Dual Rank x4 DDR4 -2933 CAS -21 -21 -21 Registered Smart Memory Kit հիշողություն սալիկներով, սակայն ընհանուր մինչև 24 RAM սալիկ տեղակայելու և մինչև 3 TB աճեցնելու հնարավորությամբ (կիրառելով LRDIMM սալիկներ): Օպերատի վ հիշողությունները միացված կլինեն six channel տեխնոլոգիայով : Սերվերը կունենա	հատ	14586000	14586000	1	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	1	Պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված մինչև 50 աշխատանքային օր

				• մինչև 8 հատ SFF տեսակի կոշտ սկավառակ ավելացնելու հնարավորություն ; • մայր սալիկի վրա ինտեգրված ցանցային քարտ՝ 4 x 1Gb RJ45 ինտերֆեյսերով ; • 5 հատ USB 3.0 պորտ , • 1920 x 1200 (16 bpp) կետայնությունը ապահովող տեսաքարտ ; • 2 հատ 500 -watt hot plug սնուցման բլոկեր, որոնք ապահովվում են redundancy, մինչև 94% էֆեկտիվություն (ներառված հոսանքի սնուցման լարերը); • 2 հատ PCIe 3.0 սլոտեր ; • համապատասխան PCI -Ex պորտ, SN1100Q սարքի միացման համար (թեստավորված և համատեղելի QLogic Fibre Channel HBA HPE SN1100Q մոդելի հետ • Hypervisor – ի բեռնման համար նախատեսված 32GB microSD RAID 1 USB մոդուլ (Microsoft Hyper -V և VMware ESXi համակարգերի հետ համատեղելի և թեստավորված); • Microsoft Windows Server 2019 Datacenter արտոնագիր 16 -Core – ի համար English տարբերակը ներառյալ ; Սերվերի բոլոր կոմպոնենտները, բացի օպերացիոն համակարգի լիցենզիաներից, արտադրված են միևնույն արտադրողի կողմից : Սերվերը կինտեգրվի ընկերությունում արդեն իսկ գործող համակարգի հետ և կունենա մեկ ընդհանուր ղեկավարման համակարգ: Համակարգի տեղադրումը գործարկումը և կարգաբերումը կիրականացվի արտադրողի սերտիֆիկացված մասնագետների կողմից : Տեխ. աջակցությունը ներաշխիքը՝ 3 տարի, 24x7 ռեժիմում արտադրողի սերվիսային համակարգում խնդրի գրանցման և ամենաուշը 4 ժամվա ընթացքում հետադարձ կապի ապահովման հնարավորությամբ, երկու արտոնագրված սերվիս -							

				կենտրոնների առկայություն ՀՀ տարածքում որոնք ներկայացված են հետևյալ հղումներով՝ www.unicomp.am; www.biline.am): Տվյալ հարցման մեջ ներառված բոլոր սարքավորումների համար կտրամադրվի արտադրողի ավտորիզացիոն նամակ (MAF): Երաշխիք՝ 3 տարի:							
2	30211220/1	Համակարգիչ լրակազմ (all in one)	Dell EMC Dell Optiplex Dell Technologies	Dell OptiPlex All-in-One Մոնոբլոկ համակարգիչ 23.8", 60.45սմ Էկրանի տեսակը՝ FHD 1920x1080, IPS, Non -Touch, Anti -Glare Կենտրոնական պրոցեսոր՝ 10th Generation Intel Core i5 -10500T Cores - 6, Threads - 12, Base Frequency - 2.30 GHz, Max Turbo Frequency - 3.80 GHz, Cache - 12 MB SmartCache, Bus Speed - 8 GT/s Օպերատիվ հիշողություն՝ 1x8GB DDR4 2666 non -ECC Memory, Ներքին կոշտ սկավառակ՝ 128 GB PCIe NVMe SSD (Up to 1,200 MB/s Write Speed & 2,200 MB/s Read Speed),1 TB 7200 RPM SATA 2.5 Օպերացիոն համակարգ՝ նախապես տեղադրված SSD կոշտ սկավառակի վրա Windows 10 Pro for Workstation 64bit, Մկնիկ և ստեղնաշար՝ անլար, ներառյալ մարտկոցները Արտաքին պորտեր՝ RJ -45; SD card reader; USB Type -C; Headset/Universal audio port; USB 3.2 Gen 1 Type -A port with PowerShare; USB 2.0 ports with Smart Power On; USB 3.2 Gen 2 Type -A ports; Line -out audio port : Համակարգիչը ունի Full HD camera, Wireless Driver, Intel® WiFi 6 AX201 2x2 (Gig+) + Bluetooth 5 Համակարգիչը, ստեղնաշարը և մկնիկը նույն արտադրողից են (բրենդի) կողմից արտադրված Մեկ արտոնագրված սերվիս -կենտրոնի առկայություն ՀՀ տարածքում www.lans.am արտադրողի	հատ	516000	516000	1	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	1	Պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված մինչև 50 աշխատանքային օր

				հավաստիացման թերթիկ ը (MAF) կտրամադրվի : 1 Windows 10 Pro for Workstation 64bit սկավառակ տեղադրված համալրող սարքերի դրայվերներով: Երաշխիք՝ 3 տարի:							
3	30211220/2	Համակարգիչ լրակազմ	Dell EMC Dell Optiplex Dell Technologies	Dell OptiPlex Tower Մայրական սալիկի չիպսեթ՝ Intel B460 Կենտրոնական պրոցեսոր՝ Intel Core i3 -10305 , Cores - 4, Threads - 8, Base Frequency - 3.60 GHz, Max Turbo Frequency - 4.30 GHz, Cache - 6 MB SmartCache, Bus Speed - 8 GT/s Օպերատիվ հիշողություն՝ 1x8GB DDR4 2666 DIMM ECC, Memory Expansion Slots - 4 DDR4, Maximum Memory - 64 GB DDR4 - 2666 ECC SDRAM Ներքին կոշտ սկավառակ՝ 128 GB PCIe NVMe SSD (Up to 1,200 MB/s Write Speed & 2,200 MB/s Read Speed), 1 TB 7200 RPM SATA 3.5" Օպերացիոն համակարգ՝ նախապես տեղադրված SSD կոշտ սկավառակի վրա Windows 10 Pro for Workstation 64bit, Մկնիկ և ստեղնաշար՝ անլար, ներառյալ մարտկոցները Արտաքին պորտեր՝ Universal Audio Jack; 2x USB 2.0 Type -A Ports (front); 2xUSB 3.2 Gen 1 Type -A Ports(front); Line - out; HDMI, DisplayPort; 2xUSB 3.2 Gen1 Type -A Ports (rear), 2xUSB 2.0 USB 2.0 Type -A ports with Smart Power On (rear); RJ -45 port 10/100/1000 Mbps; VGA; PCIe x 1 Slot; PCIe x 16 Slot Սնուցման բլոկ՝ 200W up to 85% efficient Power Supply Մոնիտոր՝ Dell 22 Monitor E2222HS 21.5", 54.61սմ Էկրանի տեսակը՝ IPS Կետայնությունը՝ Full HD 1920 x 1080 @ 60HZ Ֆորմատը՝ 16:9 Նոմինալ կոնտրաստի գործակիցը՝ 3000:1 Պայծառությունը՝ 250 cd/m2 Արձագանքմա ն ժամանակը՝ 5 - 10մվ Կետերի հեռավորությունը՝ 0.248մմ Միացում՝ HDMI, VGA, DP	հատ	516000	4644000	9	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	9	Պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված մինչև 50 աշխատան քային օր

				Audio line -in, Audio line -out Տեսանելի անկյունը՝ 178° / 178° Գույների խորությունը 16.7մլն / Ներկառուցված բարձրախոսներ Համակարգիչը, մոնիտորը, ստեղնաշարը և մկնիկը միևնույն նույն արտադրողի են Մեկ արտոնագրված սերվիս -կենտրոնի առկայություն ՀՀ տարածքում www.lans.am արտադրողի հավաստիացման թերթիկը (MAF) կտրամադրվի : Նվազագույնը 1 հատ Windows 10 Pro for Workstation 64bit սկավառակ տեղադրված համալրող սարքերի դրայվերներով և 1 հատ HDMI լար 1.8 մ, 2 հատ CEE 7/7 - IEC 320 C13 մալուխ: Երաշխիք՝ 3 տարի:							
5	30232140/1	Պլոտեր	HPI HP DesignJet Hewlett Packard Inc	HP DesignJet T630 36-in Տպման տեխնոլոգիա՝ Thermal Inkjet Տպման արագություն՝ 30 sec/page on A1, 76 A1 prints per hou Քարթրիջների քանակը՝ 4 (C, M, Y, K) Տպման առավելագույն թույլատրելիություն՝ 2400x1200 dpi, սև -սպիտակ, գունավոր Հիշողություն՝ 1ԳԲ Ինտերֆեյս՝ Wi -Fi, Ethernet (RJ -45), USB, web Finished output handling՝ Sheet feed, roll feed, automatic sheet feeder, media bin, automatic horizontal cutter Սարքավորումներ՝ Printer, printer stand, printhead, introductory ink cartridges, spindle, quick reference guide, setup poster, power cord: տեղադրումը և կարգաբերումը նախատեսված է: Երկու արտոնագրված սերվիս -կենտրոնի առկայություն ՀՀ տարածքում որոնց տվյալները ներկայացված են հետևյալ հղումներով՝ www.unicomp.am; www.biline.am:	հատ	612000	612000	1	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	1	Պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված մինչև 50 աշխատանքային օր

				Կտրամադրվի արտադրողի հավաստիացման թերթիկ (MAF): Երաշխիք՝ 3 տարի:							
6	30216110/1	Բազմաֆունկ ցիոնալ արագագործ սկաներ	HPI HP Scanjet Hewlett Packard Inc	HP ScanJet Enterprise Flow N7000 snw1 600 x 600 dpi ADF՝ 80էջ, ստանդարտ Ինտերֆեյս՝ Ethernet 10/100/1000 Base -T, USB 3.0, WiFi 802.11 b/g/n, WiFi Direct Հիշողություն՝ 1ԳԲ ADF սկանավորման արագություն՝ Up to 75 ppm/150 ipm Սարքավորումներ՝ scanner; Power cord; Power adapter; USB cable; Scanner engine; Flyers; Install guide ՀՀ տարածքում որոնց տվյալները ներկայացված են հետևյալ հղումներով՝ www.unicomp.am; www.biline.am : Կտրամադրվի արտադրողի հավաստիացման թերթիկ (MAF): Երաշխիք՝ 3 տարի:	հատ	720000	720000	1	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	1	Պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված մինչև 50 աշխատանքա յին օր
9	30232231/1	Կոշտ սկավառակ	HPE Hewlett Packard Enterprise	2 ՏԲ, SAS 12G 10K, SFF 2,5", նախատեսված HP ProLiant ML350p Gen8 սերվերի համար 24x7 ռեժիմում արտադրողի սերվիսային համակարգում խնդրի գրանցման և ամենաուշը 4 ժամվա ընթացքում հետադարձ կապի ապահովման հնարավորությամբ երկու արտոնագրված սերվիս - կենտրոնների առկայություն ՀՀ տարածքում որոնք ներկայացված են հետևյալ հղումներով՝ www.unicomp.am;www.biline.am)ար տադրողի ավտորիզացիոն նամակ (MAF): Երաշխիք՝ 1 տարի:	հատ	600000	2400000	4	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	4	Պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված մինչև 50 աշխատան քային օր
30	31685000 /4	Երկարաց ման լար տիպ 1	APC Schneider Electric	1.8 մետր, 5 տեղանի APC PM5U-RS/կամ համարժեք/ Երաշխիք՝ 6 ամիս:	հատ	18000	36000	2	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	2	Պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված մինչև 30 աշխատան քային օր

31	31685000/5	Երկարաց ման լար տիպ 2	APC Schneider Electric	2 մետր, 6 տեղանի APC PM6-RS/կամ համարժեք/ Երաշխիք՝ 6 ամիս:	հատ	20400	40800	2	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	2	Պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված մինչև 30 աշխատան քային օր
33	31685000/7	Երկարաց ման լար տիպ 4	Gembird	5 մետր, 5 տեղանի, հողանցումով, անջատիչով, գույնը սպիտակ GEMBIRD SPG3-15PPG: Երաշխիք՝ 6 ամիս:	հատ	7200	14400	2	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	2	Պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված մինչև 30 աշխատան քային օր
42	31442000/1	Մարտկոց տիպ 1	Maxell	Maxell AAA Alkaline, տուփով, տուփի մեջ 2 հատ:	հատ	360	7200	20	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	20	Պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված մինչև 30 աշխատան քային օր
43	31442000/2	Մարտկոց տիպ 2	Maxell	Maxell AA Alkaline, տուփով, տուփի մեջ 2 հատ:	հատ	360	7200	20	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	20	Պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված մինչև 30 աշխատան քային օր

* Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Վաճառողը.
* Ապրանքները պետք է լինեն չօգտագործված, նոր և որակյալ.

ԳՆՈՐԴ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրեն՝
_____ Հ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Գիրազի 36, բն 14
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ,
Հ/Հ 1370026273290100
ՀՎՀՀ 01253291
Տնօրեն՝
_____ Ս. Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«27» 09. 2021թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/50-1» ծածկագրով Պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի					ՀՀ դրամ
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ.-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝		
			III եռ. /2021թ./	IV եռ. /2021թ./	Ընդամենը
1	48211130/2	Սերվեր	14586000	14586000	14586000
2	30211220/1	Համակարգիչ լրակազմ(all in one)	516000	516000	516000
3	30211220/2	Համակարգիչ լրակազմ	4644000	4644000	4644000
5	30232140/1	Պլոտեր	612000	612000	612000
6	30216110/1	Բազմաֆունկցիոնալ արագագործ սկաներ	720000	720000	720000
9	30232231/1	Կոշտ սկավառակ	2400000	2400000	2400000
30	31685000 /4	Երկարացման լար տիպ 1	36000	36000	36000
31	31685000/5	Երկարացման լար տիպ 2	40800	40800	40800
33	31685000/7	Երկարացման լար տիպ 4	14400	14400	14400
42	31442000/1	Մարտկոց տիպ 1	7200	7200	7200
43	31442000/2	Մարտկոց տիպ 2	7200	7200	7200

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են անողական կարգով:*

ԳՆՈՐԴ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Չ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրեն՝
Հ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրազի 36, բն 14
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ,
Հ/Հ 1570026273290100
ՀՎՀՀ 01253291
Տնօրեն՝
Վ. Խանչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«27» 09. 2021թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/50-1» ծածկագրով Պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ Ապրանքները՝

N	Մատակարարված Ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 27 » 09. 2021թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/50-1» ծածկագրով Պայմանագրի

ԱԿՏ N_____
Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը Պայմանագրի համարը
Պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված Ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն